

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԳ



ՈՐԱՄԱՆՈՂԻ ԽԱՔԵԶՈՒՐԾ

891.99

6-64

9740

Гриць Загнійті
Уривки з п'яти

212

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՐԱԶ

ԱՅՈՒԹՎԱՆ Հ 1981 թ.

891.99-93

Q-64

ՍԻԱՄԱՆՔԱԾՈ
ԵՎ
ԽԱԶԵԶԵՐԵՐԵ

ԵՐԵՎԱՆԻ ՎԵՐԱՄԾՈՒՅԻՆ ՀԻՐԱՏԱՐԱԿՈՒՐՅՈՒՆ



ՀԱՅԹԵՏՐԱՍ
ՀԼԻԵՄ ԿԵՆՏՎՈՒԽՆ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1947

Նկարները և շապիկը՝
Ակարիչ՝ ՀՈՎՀ. ՇԱՎԱՐՃԻ

ОВ. ШИРАЭ
СИАМАНТО И ХАДЖЕЗАРЕ
(На армянском языке)
Армгия, Ереван, 1947

ՍԻԱՄԱՆԹՈ ԵՎ ԽԱԶԵԶԱՐԵ

ՆԱԽԵՐԴԱՆՔ

1

Ելա նորից Սիփանն ի վեր, որ իմ երդի սախորով
Սիրո սոկի աղբյուրներից պաղ ջուր առնեմ ջերմ
սիրով,
Բայց մի սիրո աչքի լացով ու կարոտով համբույրի՝
իմ սախորում արցունք դարձավ ցողն հուշերի
աղբյուրի.

Եվ արցունքի միջից կարծես ինձ նայեցին կարոտով
Սիամանթոն, Խաջեղարեն՝ դարեր լացած աչքերով, —
Նրանց անհույս աչքերի մեջ անբախտ մի սեր կարդացի
Եվ իմ երդի արցունքներով նրանց սերը ես լացի, —
կարծես սիրուս ծաղիկները սրտիս վրա չորացան,
Ու ես ընկա մութ գիշերի փշերով լի մի կածան՝
Ուր դեռ կոկոն սիրուր թոշնում, սերն էր մեռնում
սարվորի,


Կյանքն էր նման սև գերանդու բերանն ընկած մի լորի,
Ուր, որ ջահել մի հայ չորան և քուրդ աղջիկ մի
չքնաղ

Երազներով իրար գտան սուրբ սարերում ցողաշաղ,
Համբուրվեցին հովերի պես գաղտնի սիրո շղարշավ,
Բայց պսակեց բախտը մոայլ՝ նրանց սերը լոկ փշով,
Եվ դեռ ծաղիկ, իրար ծարավ, կորան անդարձ ու
անտես՝

Անապատի բերանն ընկած երկու կաթիւ ջրի պես . . .

2

Բայց թե եկեք, ով աղջիկներ, եկեք ինձ հետ, ձեզ
տանեմ,
Գեթ երդի մեջ՝ աստվածային սիրո ճամբան ձեզ
հանեմ . . .



ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

1

Սիստան սարը հազավ դանդաղ գիշերվա թուխ

յափունջին

Ու մակաղեց Սիամանթոն հոտը սարի մի լանջին,
Վրան քաշեց այծենակաճն ու մուշ-անուշ մտավ քում.

Դլսին աստղերն հայտնվեցին երազներով իր ժպտուն.
Երազի մեջ Սիամանթոն սարից ահա իջավ ցած՝
Մինչև աղբյուր՝ ճամբա տվին ծաղիկները

արթնացած.

Բայց աղբյուրին դեռ չհասած՝ տեսավ կանդնած մի
եղնիկ,

Ուղեց զարկել, բայց եղնիկը հանկարծ դարձավ մի
աղջիկ.

— Մի սպանիր, ես քո բախտն եմ, քեզ խնայիր, իմ
սիրած.

Ասաց աղջիկն ու տղայի ձեռից աղեղն ընկավ ցած . . .

— Դու ո՞ր սարի եղնիկն էիր, քեզ ո՞ր ճամբան ինձ
բերեց.

Ասաց հովիվն ու աղջկան երազի մեջ համբուրեց.

— Միլո ճամբան՝ ասաց աղջիկն ու հանելով լույս
մատից

իր մատանին հովիվն տվեց, որպես սիրո խոսքն
անբիծ.

Պւ երազով հովիվն ինքն էլ՝ իր մատանին կուսական՝

Լրայես իրա բախտի աստղը՝ անխոս տվեց աղջկան . . .

— Արի տանեմ քեզ իմ սարը, — հովիվը մեղմ շշնջաց,
Եվ ուղում էր գրկել նրան ու համբուրել, բայց
հանկարծ

Նորից եղնիկ դարձավ աղջիկն ու ծիծաղով իր անգին
թռավ կորավ քերծերի մեջ՝ շվար թողած որսկանին, —
Սիամանթոն ուզեց վազել, ոտքը դիպավ մի քարի,
Եվ արթնացավ՝ երազն անցավ՝ տեսավ լոկ բույլն
աստղերի . . .

Նորից փակեց աչքը սիրով, նորից տեսավ երազն այն, —
Նորից եկավ եղնկավոտ այն աղջիկը տեսլական,
Նորից բոնեց, նորից փախտվ ու յոթն անգամ նույն
խաղով

Նույն երազը հովվին քովեց՝ նույն աղջկա
ծիծաղով . . .
Այս, երազ են համբույր ու սեր, երազն էլ կյանք է
թվում՝
Բաղդավորը նա է միայն՝ ում երազն է կատարվում:
2.

Սիփան սարի գլուխն արծաթ՝ ահա ոսկու փայլ առավ,
Արեն հագավ իր ծիրանին, դեպի երկինք քայլ արավ.
Գյուղերն անուշ ծխի ամպով, արեի հետ գուրս ելան,
Սարերն ելան դաշտից հոտերն՝ ինչպես ամպը
վաղորդյան.

Սիամանթոն հոտը քշեց, ելավ կանաչ սարն ի վեր,
Յըիվ եկան ուլերն ինչպես ծաղիկ քաղող մանուկներ.
Ու վաղորդյան շաղերի մեջ, լանջերն ի վեր զով սարի՝
Սարի սուսան հարսներին զերվեց հոտը ոչխարի:
Սիամանթոն թիկնեց ժայռին ու ցած նայեց

աղբյուրին. —
Զորում զրկեց պատկերն իրա՝ աղբյուրի ջինջ հայելին,
Կարծես ընկավ աղբյուրի մեջ ուրիշ՝ մի թուխ արեգակ
Եվ աղբյուրը ջրահարսի ծիծաղ դարձավ ժայռի

առակ . . .
Այդ աղբյուրից՝ տարին մի հեղ՝ ամեն ուխտի
առավոտ,
Զուր են առնում աղջիկները, ուխտ են կապում նրա
մոտ,
Զուր են տանում իրենց զանգակ կարապնավիզ
կժերով.

Ու ջրի հետ համբույր յարին՝ նոր վարդացած թշերով.
Ու մուրազին է մեկն հասնում, մեկն հառաչում՝ «ախ
չկա».

Եվ աղբյուրն է միշտ գողանում ծիծաղն ու լացն
աղջկա... .

Սիամանթոն սրինգն առավ ու նվազեց, նվազեց,
Սրտի արցունքն՝ իր սրնգի աչիկներից դուրս բխեց.
Իր երազն էր նա դեռ լալիս ու կարոտը եղնիկի,
Մանանա էր կարծես իջնում մեղեդիով սրտախոր,
Ու դյութվելով ոչխարները անուշ լացով սրընդի՝
Գլուխ գլսի մնչում էին՝ անգիտությամբ բախտավոր.
Ու երբ ինքն էլ հարրեց, հոգնեց ու ցած նայեց մի
վայրկյան՝

Չորում կարծես աչքը դիպավ իր երազի աղջկան,—
Ախ, չէ՛, նա չէ՛ր, երա՛զ էր նա... .

Ու աղջիկներն աղբյուրի՝
Երազի պես երգում էին իրենց կարոտն համբույրի:

Արեւ պաղ աղբյուրին
Ընկել՝ կդողա.
Ծարավ եմ քո համբույրին,
Աչքի լույս տղա:

Տղա, դու ո՞ւր ես, չկաս.
Եկել եմ, արի,
Իմ սիրոտը ծարավ մի թաս,
Դու աղբյուր սարի:

Ցերեկը՝ սիրոս լալիս,—
Լացս չես լսում,
Երազիս մեջ ես գալիս
Ու երազ դառնում ...

Ու այլայլվեց Սիամանթոն, ժայռի վրա շուռ եկավ,
Ժայռից քարի մի փերթ պոկվեց ու աղբյուրի մեջ
ընկավ,—

Աղջիկները վեր նայեցին . . .

Այն ինչ տղան վերստին

Նվազում էր իր կարոտի լեզուն տված սրբնդին, —
իր երազն էր ասես պատմում անուշ լալով իր մասին՝
իր երազն էր նա ետ կանչում՝ հավատալով երազին . . .
Ու երբ սըրինդն հովվի շուրթից արցունքի պես ընկավ
ցած՝

Մեկ էլ ձորից վեր նայեցին աղջիկները կախարդված, —
Հովիվն այնքան էր գեղեցիկ ու մեղեղին այնքան խոր,
Որ մոռացան աղջիկները սիրածներին հեռավոր . . .
Ու երբ անցավ սիրո ցնորքն իրենց սև-սև աչքերից, —
Ամենքն անխոս առան կժերն ու ջուր լցրին աղբյուրից.
Բայց գեռ մեկը՝ աղբյուրի դեմ՝ աղբյուր ու կուժ
մոռացած՝

Ժայռին հենվել՝ միտք էր անում՝ անուշ վշտի մեջ
ընկած.

Նա էր իմ վիթ Խաջեղարեն, բեկի դուստրը
վարսասաթ,
Երեսը կաթ ու բերանը՝ այն կաթի մեջ ընկած վարդ.
Կուրծքն հասակի ծառը զուզող՝ զույգ խնձորի էր
նման,

Ու ոչ մի ձեռ՝ ինչպես տերեւ՝ չէր դուրդուրել դեռ
նրան.

Բարակ մեջքը Վանա ծովի կարապի վիզն էր կարծես,
Մեջ այն շուշան աղջիկների՝ նա վառվում էր վարդի
պես:

Նրան գերվեց Սիամանթոն ու շշնջաց զվարթուն.

— Այս դու չէի՞ր իմ երազում եղնիկ դառած՝ ինձ

Ու կարծես թե հովվի աչքեց պոկվեց աստղի պես մի
բան՝ խարում . . .

Ցոլաց ընկավ կույսի սիրտը ու այլայլեց աղջկան . . .
Ու վեր նայեց աղջիկն ահով ինչպես ծաղիկն արևին, —
Այսպես՝ սրտի հայացքներով իրար սիրո խոսք տվին,
— «Թե դու էիր՝ մի ջուր տուր ինձ» ու ձեռն ահով
մեկնեց ցած, —



Ու կարկամեց հաջեղաբեն, շուրջը նայեց կարմրած,
Ու վեր ելավ բաղեղի պես, ու ջուր տվեց իր կժով . . .
իջավ անխոս, հովին լցված մի անսովոր մշուշով, —
Ու կթվար թե սիրտն արդեն ուրիշ տեսակ էր թակում,
Սիրո հավքը իջավ սրտին ու սրտի մեջ դրեց բույն
Ու գյուղ իջան աղջիկները կարոտների կժով լիք.
Չորում սիրտը տված հովվին՝ զեռ մնչում էր մի
եղնիկ, —

հաջեն էր նա, որ աղբյուրից ջուր առնելը մոռացավ,
Սիրտը՝ ոսկի մի երազով՝ դատարկ կժով տուն
դարձավ. . .

Ու հետեւից մեկ էլ նայեց Սիամանթոն սիրաբած,
Մինչև զարկած իր եղնիկը սարի ուսով իջավ ցած . . .
Հովք եկավ ու գուրզուրեց զանգուրները չորանի,
Ա՛խ, նա այրող համբույր կուղե, հովվի, քո խաղերն
ինչ անի:

Ու նվազեց սրբինդն էլի, որ լալիս եր ու
կանչում, —
Սիրահարի նվազի տակ ժայռն էլ սեր էր անբջում:

3

Տարի բոլոր ձյուն կշողա Սիփանա սեղ սարերին,
Բայց շատ այրվեց սիրտը հովվի՝ զանգատվելով
ձյուներին . . .
— Ա՛խ ինչ քար սիրտ պիտի լինի, որ սիրող սիրտը
կոտրի՝
Մտածելով՝ Սիամանթոն թողեց Սիփանն իր բարի.
Ու գյուղ գնաց, հանեց խենջարն ու յափունջին, սիրտը՝
հեվ,
Չեռքը կրծքին՝ գնաց կանգնեց իր սիրածի հոր առջե.
— Ինչ կա սարի Սիամանթո, խոսեց բեկը մեղմազին,
Գայլը սարից ոչիսա՞ր տարավ, թե՞ շոր չունես քո
հագին . . .
Հովվիվն ասաց թե՝ ծաղկում է սարի վրա ամեն բան,
Միայն ինքն է թոշնում սիրուց՝ հարս է ուղում
աղջկան . . .

— «Դուրս կորի, դուրս», գոռաց բեկը ու վեր թռավ նա
ոտքի,
Ասես հովազը դուրս նայեց որջի միջից մութ աչքի . . .
Բայց շնչաց հովիսին ահով՝ «Աստված է մեզ սլսակել՝
Երազի մեջ՝ իսպան հեղքից դեմքը ցոլաց աղջկա՝
Հանկարծ մոտիկ զոան ձեղքից դեմքը ցոլաց աղջկա՝
Կարծես լուսինն ամպից նայեց, բայց չքացավ նորից
նա,

Երբ դուրս արավ հայրը հովվին՝

— «Էլ չերեաս սարերում,
Ո՞վ է լսել որ չոբանը փեսա լինի բեկ մարդուն . . .
Երեսում է կտրիճ էիր՝ դուռս եկար քո ոտքով, —
Գնու . . . ու տես՝ իմ աղջիկը մեկ էլ չանգնի՛ քո
մտքով» :

Եվ նույն գիշեր Սիփան սարը հովիվ տեսավ ուրիշին,
Սիամանթոն իջավ սարից, աչքը սարի մշուշին, —
Վշտով ամպեց Սեփանը ծեր, աշնան թուխպերն իջան
վար,
Երբ հեռացավ հով զողանից Սիամանթոն վշտահար:

4

Գնաց տխուր Սիամանթոն, զնաց ուրիշ մի աշխարհ.
Թողած գյուղում եղնիկն իրա, թողած բեկի սիրու
քար,

Ու դեռ հայրը դեյլան ծխում, հորդորում էր աղջկան,
— ի՞նչ ես էլի գլխիս ամպել՝ բա՛ց երեսիդ լուսնկան,
Ու ձգելով վիզն աղջկա նորից մի շար հակինթի՝
Ասաց «Խելքն է բախտի ճամբան, սերը ճամբան չէ՝
բախտի . . .

Հանիր փուշը քո վարդ սրտից, Ազիզ բեկի որդուն առ,
Որ հոտ ունի ինչպես Առնոս սարը ծածկող մի անտառ»:
— Ախ չէ, բարո՛, թեկուղ ոսկով սարեր ծածկի՝ չեմ
ուզում,
Բարո՛, ինձ մի մալուլ թողնի, բա՛բո, իմ սիրոն է
մըսում.
Բարո՛, գարնան ծիծեռնակի ձագը բնից մի՛ հանի, —

Մի՛ սպանի քո աղջկան, յարին մալուլ մի անիր . . .»:
Բայց քարի պես, ժեռ քարի պես ըեկի սիրտը անդռա՝
Ասես չէր էլ ուղում լսել լացն ու մորմոքն աղջկա.
— Վերջը ոտքով քարին կուղա՝ հորդ խոսքից մի անցիր,
Հոր անեծքը մոր անեծք չէ, հոր անեծքից վախեցիր . . .
— Ախ, չէ, բա՛րո, կանչիր ետ զա, նա արծիվն է

Սիփանի,

Կանչիր ե՛տ զա իմ գարունը՝ սիրո զետ զա՝ ինձ
տանի» . . .

Ու լալիս էր աղջիկն անհույս ու միշտ ձեռքը ծեր բեկի
Լուս սրբում էր, բայց չէր զգում բոցն աղջկա
արցունքի.

— Լո՛, լո՛ ողբում Խաջեղարեն ու տեսնում էր երազում՝
Սիամանթոն էր խոռված՝ իր մատանին էր ուղում . . .
Մինչ օրն ի բուն Խաջեղարեն աղբյուրի մոտ

թափառում

Յուն էր զալիս ու խեղճ կժով սրտի արցունքն էր
բերում:

Այ աղբյուր, սարի աղբյուր,
Այ անուշ, բարի աղբյուր,
Այիս, զու էլ լալով կերթաս,
Իմ կորած յարի աղբյուր:

Այ հավքեր, սարի հավքեր,
Այ նախշուն, բարի հավքեր,
Այիս, ձե՛ր էլ սիրտն է սղում,
Իմ կորած յարի հավքեր:

Այ Սիփան, սարի Սիփան,
Այ բանձր, բարի Սիփան,
Դու էլ ես զումանի մեջ,—
Իմ կորած յարի Սիփան:

Բայց աղբյուրը լուր չէր տալիս ու թվում էր թե լալիս՝
Հեռվում լացող իր սիրածի սև աչքերից էր զալիս:

ԵՐԳ ԵՐԿՐՈՅԴ

1

Զմեռն անցավ. բացվեց նորից վառ կարոտի մի
գարուն,

Կարապները ծովերն իջան՝ ինչպես ափից վլվող ձյուն.
Քոչվորների սիրո երդը նորից սուրաց սարն ի վեր,
Գարունը սեր, արել սեր, երկիր երկինք դարձան սեր,—
Մեռած սերերն հողից ելան ծաղկի վոխված աչքերով,
Սարերն ելան ապրողները, որ պսակվեն վարդերով...
Բայց ա՛խ, սարի Սիամանթոն մնաց վշտի անձավում
Լալով հուշերն իր Սիփանի՝ թափառում էր պաղ
հեռվում.

Կամ տեսնելով եղնիկներին՝ հառաջում էր մեղմակի՝
Զէ՞ որ չքնաղ Խաջեղարեն շատ էր նման եղնիկի. ...
— Ա՛խ երանի, մրմնջում էր, երանի ձեզ, եղնիկներ,
Որ ման կուգաք՝ մուրազն առած ու ցավ չունի սիրտը
ձեր.

Ու մերթ գիշերն իր սրբնզով հեկեկում էր դալկահար,
Աչքը ձդում ճամբաներին՝ չէր իմանում ո՞ւր գնար,—

Ճամբա կա՝ ծով է տանում,
Ճամբա կա՝ այդի,
Ճամբա կա՝ ափ է հանում
Նավակը կյանքի:

Ախ, ո՞րն է սիրուս ճամբան,
Ցույց տվեք, ասողե՞ր,

Առանց սեր ի՞նչպես մնամ,
Կմեռնեմ անսեր:

Ու մի գիշեր երազ տեսավ, բայց այս անդամ չար երազ,
Տեսավ իբր իսջեղարեն հարսնացել է անմուրազ...
Ի՞նչ իմանաս երազն ի՞նչ է, որ նման է գիշերի, —
Իսպարի մեջ չկա՞ն կայծեր ճշմարտության աստղերի.
Ու վեր թռավ Սիամանթոն, նժույգն հեծավ գիշերով,
Յոթը գիշեր ճամբա կտրեց՝ երազի սև հուշերով,
Հասավ յուրդերն ու երեսին խաղաց շունչը սարերի,
Հեռվից մոր պես ձեռքով արավ ահա Սիփանն իր բարի,
Ու աղջիկներն հայտնվեցին՝ ինչպես ծանոթ
δաղիկներ, —

Բայց նրանց մեջ վարդը չկար ու փուշ թվաց սարն
անսեր ...

Աղջիկներ, ա՛խ, չե՞ք տեսել
Շվաքն իմ յարի,
Ինչո՞ւ է պղտոր գալիս
Աղբյուրն իմ սարի:

Ում աչքն է յարիս տեսել՝
Ի՞ն աչքին մեռնեմ,
Ին աչքը թող ինձ նայե՝
Կարոտս առնեմ:

Ա՛խ, Սիփան սարը տեսա,
Տեր չկա սարիս,
Երազիս չարը տեսա՝
Ո՞ւր տարան յարիս:

Բայց տիրեցին ծաղիկները ու նա վարդից լուր
չառավ,
Եվ կարոտի կայծը սրտում մի հրդեհի բոց դառավ,
Ու ձին քշեց ձորերն ի վար՝ մտամոլոր մտավ գյուղ,
Երբ տիրարեր իրիկունն էր կտուրներից քաշում ծուխ,
Եվ հյուր մնաց մի պառավիկ ու վարդավառ, վաղ ծեղին

Հոեց հեռվից դհուլ զուռնի հունչն ու թինդը ցնծագին, —
Ականջ դրեց, ասաց «մամիկ, այս ի՞նչ ձայն է, որ
կուդա,

Ծովասարի հովերի պես մեկ շնկում է, մեկ չկա».

Ու պառավը խոսեց մեղմով «Ախ, ի՞նչ ասեմ, որդի
ջան,

Հեռվից եկել հարս են տանում Զարեհ բեկի աղջկան, —
Բայց լալիս է իսածեղարեն ու քողի տակ հառաչում,
Քուն թե արթուն երազ դառած՝ Սիամանթոն է
կանչում . . .

Բայց թե շուզեց Զարեհ բեկը հարս տակ աղքատ իր
դուլին,

Ու կորցրեց վարդ աղջիկը սրտի մալուլ բլուլին . . .»
Հոեց պառավն ու . . . ամպի պես Սիամանթոն մոայլեց,
Ու աչքի մեջ անհույս մի միուք՝ մի արցունքի պես
փայլեց.

Ասաց «Մամիկ, առ մատանիս, ինձնից հարսին տար
նվեր՝

Թող երազը մուրազ լինի, թող . . . ողջ մնա հայրը
ծեր . . .»:

Ու մնաց հյուրն արցունքի մեջ՝ աչքը ուրախ մի դարձի.
Պառավն առավ հովվի գաղտնիքն ու մատանին սիրածի,
Ու պահելով քիշմիշի մեջ շող մատանին հանց մի
հույս՝

Ելայ՝ հարսին ի տես դնաց՝ դնաց հույսի աչքալույս . . .

2


Ուր գառնարած հովվի հանդեպ՝ վազը են դռները
բեկի, —

Լուռ մտավ ներս պառավն անտես՝ ինչպես զեփյուռն
օրեքի,

Դեռ հուզվում էր հարսանիքը հանց դինեղետ մի
պղտոր,

Բայց զետափին հարսը լացող մի ուսի էր գլխիկոր.

Ու դեռ կոկոն թասերի մեջ վարդ գինին էր փթթում,



Միայն հարսի սև բաժինն էր արցունք դառել
գավաթում .

Նստել էր նա կակաչի պես՝ կարմիրն հաղին՝
սիրտը սև,
ինչպես թոշնակը վանդակում՝ թևերը կախ, աչքը՝
թև...
Ու շիթ առ շիթ արցունքները հասնում եղրը շուրթերի՝
կարծես փնտրում էին լալով հետքը՝ հովվի
համբույրի...
Ու թախծում է նա դլսիկոր ու չէր նայում ոչ մեկին,
Երբ մոտեցավ պառավն հուշիկ, մի թաշկինակ իր
ձեռքին.
Ու շնչաց «բարի ծաղկես, այս էլ ես եմ քեզ
բախչում».
Ու քիշմիշը դոզը ձղեց թաշկինակով իր նախշուն.
Հարսը բացեց համբ ու անփոշթ, բայց քիշմիշի մեջ
հանկարծ
ինչպես լուսինն աստղերի մեջ՝ իր մատանին
շողշողաց ...
Եվ կայծակող հույսի թափից Խաջեղարեն դալկացավ, —
Բարակել էր սիրտը վշտից՝ խնդությունից ուշքն
անցավ, —
Պառավն ահով բարձրացրեց ընկած գլուխն իր ձեռին.
Շոյեց այրվող ճակատն հուշիկ ու ջուր ցանեց
աչքերին, —
Ուշքի եկավ Խաջեղարեն՝ «Ո՞ր սարից ես դալիս դու,
Քեզ ո՞վ տվեց այս մատանին, նրան էլ չե՞մ տեսնելու.
Ինձնից պաղել՝ ե՞տ է տալիս, էլ չե՞մ պահում իմ
ճամբան,

Ասա մամիկ, ի՞նչ հնարով, ինչպես տեսնեմ ես
նրան» ...
Ու պառավը մայրաժամիտ՝ այսպես խոսեց սիրով մոր՝
— «Իմ զոնաղն է, մի դեղեցիկ, մի թուխ ջահել
Ճիավոր,
Երբ նա լսեց քո հարսնառի ուրախ ձայնը մեր կոնից՝
կարծես մահվան խոսքը լսեց՝ գույնը թուավ երեսից...»

Ու անհամբեր՝ խոսքը կտրեց իշտղեղարեն սրտադող.
— «Իմ չսիրած մարդն է գլխիս հորս ձեռքով գցել քող,
Գնա, մամիկ, ասա նրան, իշտղեղարեն քո սերից՝
Այս էլ քանի ծարավ գարուն՝ աղբյուր հանեց աչքերից.
Ասա— հիմի մնացել է մեկ օր միայն ու մի ճար՝
իզուց մորս զերեղմանին ուխտ եմ գնում՝ Ծովասար,
Կանուխ կերթամ, ասա թող դա, ասա թող դա՝ ինձ
տանի,

Ասա թող դա՝ որսը տանի թե որսկանն է Սիփանի»:
Ու գուրս ելավ պառավին ուրախ ու անմըմունջ իջավ
մար
եվ լուրն իրրե ճրադ բերեց մթնած որտեն սիրտհար:

3

Դիշերն իջել Ծովասարին ու հովն անգամ չեր հեռմ
Եվ լուսնյակի մայր ձեռի տակ դիշերն օրոցք էր թվում,
Բայց դեռ արթուն ու անլուսին մթնած սրտով երազուն՝
Սիամանթոն Ծովասարին իր լուսնին էր սպասում . . .
Այս, նա շատ էր հոգնել վշտից ու նինջն իջավ
աչքերին՝

Ու չիմացավ ինչպես քնեց զերեղմանի պաղ քարին,—
Երազի մեջ իշտղեղարեն մեռած մոր հետ երևաց,
Ու մայրն ասաց. «Սիամանթո, լույս աղջիկս քեզ
մնաց,

Առ քո թեին, թառլան ես դու ու թոցրու, տար
Սիփան» . . .

Ու համբարձավ մայրը նորից՝ հովմին թողած աղջկան.
Ու մուրազի վարդը պոկած՝ Սիամանթոն՝ չոր թվից՝
Երազ ձիով փախցնում էր նրան կյանքի ափերից . . .

4

Արեն ելավ Ծովասարից՝ բոնեց կապույտ իր ճամբան,
Սիամանթոն աչքը բացեց ու չդտավ աղջկան.
Մի զույգ ոսկի ճաներ տեսավ ու վերցրեց նա իսկույն,
իջավ սարից ու ձեռնունայն որսկանի պես մտավ տուն,

— Մամիկ, հեյ վախ, Կաջեղարեն չեկավ մթնով թե
լուսով, —

Քնել էի՝ զարթնա՝ չկար ու մնացի քո հույսով.
Այս վեղերը դտա մամիկ, բնկած էին ծաղկանց մեջ՝
Առ՝ քո բախտն է. լոեց տղան, ու պառավը կռահեց՝
— Նա եկե՛լ է, Սիամանթո, ետ դնացել խոռված,
Նա է ձգել այս վեղերը՝ երբ տեսել է քեզ՝ քնած...
«Դեռ մանուկ ես» այս են ասում քեզ այս վեղերն
աղջկա,

Խակ ծիրան է քո սիրտը դեռ՝ այսօրվա քունդ է վկա...
Գնա ու ճան խաղա գյուղում, սիրո ճամբեն մի բոնի,
Դեռ մանուկ ես, սիրո մարդ չես, թառլանը չես
Սիփանի»:

Սիամանթոն ամոթահար՝ շիկնեց ինչպես մի խնձոր,
Ու պառավից՝ իր հույս մորից՝ նորից խնդրեց
գլխիկոր.

— Գնա մամիկ, վերջին անգամ՝ թող իր խոսքը տա
վերջին,
Քո բացի՝ ասա՝ քո կարուն է լալիս ծիու ականջին... .

5

Գնաց պառավն ու ետ եկավ ու վերջին ճարը բերեց,
Ու լուրն՝ ինչպես սիրածի շունչ՝ հովվի հոգին
համբուրեց.

— Կաջեղարեն այսպես ասաց «Եթե սիրո մարդ է նա,
Եվ թե ինքն է Սիամանթոն, թե սեր ունի ինձ վրա, —
Էդուց պիտի յարին տանեն հարսանիքի հանդեսով,
Թող զա ծիով՝ ինձ վախցնի, թող չմնա ինձնից
սով ...

Թե չէ՝ ասա՝ էլ ճար չկա ու թող մեկ էլ չքնի, —
Բախտը ասա, մարդու չեն տա՝ թող իր բախտը
փախցնի»: . . .

ԵՐԳ. ԵՐՐՈՐԴ

1

Աեռներ, լեռներ իմ հայրենի, ի՞նչ եք խորհում, ախ
լեռներ,
Քար աշխարհից դուք խռոված, հեռու քաշված
հովիսներ.
Ճած ես նայում, ախ իմ Սիփան, ուսիր ամպէ
յափունջին,
Ասես բան ես ուզում ասել Գրգուռ սարի ականջին,
Բայց չես կարող ու տիսրում ես, ու Գրգուռը թախծալից
Աչք է պահում Առնոս սարին, որ դուրս կուղա
անտառից . . .
Հազար ու մի աղբյուրները՝ որուն մանյակ իր
կրծքին՝
Ծովասարն էլ հարսի տեսքով դյութել կուղե
Վարագին, —
Բայց վանքն առած իր շրթունքին՝ իրու աղոթք ու
մրմուռ
Սաղմոս կասե երկինքն ի վեր Վարագա յեռն ահա
լուռ, —
Այսպես իրար փարվել կուղեն լեռներն իրար կարոտած,
Ու չեն կարող ու թախծում են կարոտներից՝
քարացած . . .
Բայց Սիփանը ամպի տակից որդու վիշտն է կոահում,
Ու ձին հեծել՝ ինչպես մի լեռ ու դեռ ճամբար է
պահում . . .
Հանկարծ աչքը նա վեր թեքեց՝ կոինչ լսեց արծվենի՝

Տանում էին անզղները մի սպիտակ աղավնի, —
Բայց արծիվը թռավ՝ զարկեց ու խափանեց նրանց
չուն.

Ետ խլելով անզղներից՝ երկինք տարավ աղավնուն...
Զիավորը ժպտաց մի պահ, բայց ժպիտը լուռ հանգավ,
— Այս մի հավքի չափ էլ չկամ ու՝ հին վշտի մեջ
ընկավ.

Զին սմբակով հողը փորեց ու վրնջաց նրա ձին, —
Հեռվից կարծես ձիեր ելան ու նիզակներ ճոճվեցին,
Հեռվից ճամբի փոշին ելավ, ձիեր ելան սանձաթող,
Ու երեաց հարսնահանդեսը՝ գլխին փոշին՝
հարսնաքող ...

Զիավորը մեկից թռավ ղեպի ձիերն ակնղեղ՝
Ու ետ կանզնեց հարսնառն ահով՝ ինչպես ժայռին
դիպչող ղետ,

Ու միսրճվեց ձիերի մեջ Սիամանթոն աննկուն,
Որպես արծիվն իր այն տեսած, որ փախցրեց
աղավնուն. . .

Ու ծառու էին լինում ձիերն հարսնառի լաց-
կականում:

Հուր ու տապից, կովի թափից օդն էր շուրջը
շիկանում,

Եվ շիկացած օդում կարծես ղաշույնները հալվեցին՝
Միայն կոթերը փղոսկրյա՝ ձեռքերի մեջ մնացին . . .
Եվ ընկրկեց մահախուճապ խառնամբոխը հարսնառի, —
Բայց զարկում էր Սիամանթոն ինչպես շանթը մի
ծառի,

Ու կոտրատեց, մեկ դի վանեց նիզակ ճյուղքերը
մեկ-մեկ,

Մնաց բունը՝ բուն թշնամին՝ մնաց բեկը սրտաբեկ. . .
Եվ սիրածին Սիամանթոն տեսավ թարքին այն բեկի,
Ու կրծքի տակ սրտի զարկը թվաց հարված մի տեղի,
Ու մոլեզնեց Սիամանթոն, մահով բացեց իր ճամբան, —
Թռավ, խլեց բեկի գրկից իր երազի աղջկան՝
Ու ճախ ձեռով գրկեց ամուր, աջով զարկեց թշնամուն՝
Զգեց ձիու ոտների տակ . . . ու խթանեց իր ձիուն

Ու արծվի պես իր աղավնուն իր գիրկն առավ ու թռավ՝
Երեք օրվա ճամբեն մի սանձ, մի զարկ ու մի շունչ
արտի... .

2

Վերջին շողերն էր շոայլում հոգնած արեն ու անփույթ
Լեռնաշխարհն էր արդեն հազնում մշուշ կապան իր
կապույտ.

Ծաղկանց միջով, լեռանց յանջով, մուրադ ձիով
անվեհեր
Սիամանթոն սիրածն առած՝ կելներ Սիսիան սարն ի
վեր,

Կարծես սիրո հավերժական աստծո մոտ էր
բարձրանում,

Որ՝ վերջալույսն՝ իրու ոսկի հարսնաքողն էր՝
ծածանում...

Եվ հասնելով ակնաղբյուրի՝ ձիուց իջան շունչ առած,
իրենք ասես երկնքի մեջ, երկերն՝ է՛յ հե՛յ, ցած
մնաց...

Եվ աղբյուրի կանաչ գլխին վրան զարկեց բախտավոր,
Երբ աստղերը ցած նայեցին՝ աչքերի պես իրենց մոր.
Ու շնչաց մի համբույրով Սիամանթոն սիրակեղ,
— Չեմ համատում, Խաջեղարե, մի՞թե դու իմ
գրկումն ես.

Ու համբույրից շիկնեց աղջիկն՝ ինչպես կոկոն
բացվելիս,
Կույս աչքի տեղ՝ այտի փոսն էր «աչքով անում»՝
ժպտալիս.

Հանկարծ ինչպես համերժահարս՝ լուսինն անցավ
աղբյուրից.

Բնկավ աղջիկն հովվի կրծքին, ասես հալվեց
համբույրից.

— Խաջեղարե սարը սեր է, էլ չե՞ս ուղում իջնել ցած...

— Սիամանթոն, սերը սար է՝ մեռնենք սարը քո
տիրած...

— Խաջեղարե, սիրուց բացի ուրիշ դրախտ էլ չկա՞



Ու՝ համբույրով թերթեր պոկեց վարդ շուրթերից
աղջկա.

— Ախ, այս գիշեր ինչ անուշ է՝ համբույրները
ըլշացին,

Ու զգվանքից՝ կույս կոկոններն իրենց վարդերը
բացին . . .

Սարի՛ գիշեր, սիրո՛ գիշեր, մեղրագի՛շեր Սիփանի,
Սիրո՛ գիշեր, տարի՛ դարձիր, համբույրները մի՛
տանի . . .

Հովե՛ր, հավքե՛ր, ծաղկո՛ւնք, ջրե՛ր, ժայռե՛ր
աստղե՛ր, եղնջե՛կներ,
Դո՛ւք էլ, դո՛ւք էլ համբուրվեցեք, ալսակվե՛ցեք այս
գիշեր,

Ախ, անուշնա՞ն թող համբույրով սիրո վշտերն ու
աշխարհ,—

Ու հալվեցին սիրո բոցին, աշխարհն ասես էլ չկար,
Սարի՛ գիշեր, սիրո՛ գիշեր՝ աստղաշարը ճակատին,
Երա՛զն առած, մուրա՛զն առած հանդան սարի
գագաթին . . .

3

Ախ մարդն ի՞նչ է, որ երկնքի ճակատագիրն է
կարդում,
Բայց թե ի՞նչ կա իր ճակատին՝ դեռ չդիտե
աշխարհում . . .

4

Արդեն սաղմոսն էր ավարտում ամեն կաքավ իր քարին,
Արդեն արեն էր արթնանում, ոսկի ցանում սարերին.
Բայց սիրահար սիրտը սրտին՝ քնած էին դեռ անդորր՝
Հովվի հաղթած նիղակի տակ, յափնջու տակ
բախտավոր . . .

Հանկարծ քամին ազոավի պես նրանց գլխով անց
կացավ,

Ու նրա պաղ թևի զարկով Խաջեղարեն արթնացավ,

Ու թվաց թե աղբյուրի մոտ՝ ամպը ամպին ձայն տվեց
Ու բուղագոռ էն աղմուկից Խաջեղարեն գունատվեց՝
Սիրտը քամվեց ու սև աչքից մի տաք կաթիլ ծանրացավ
Հնկավ քնած քաջի դեմքին ու նա իսկույն արթնացավ.
— Ի՞նչ պատահեց Խաջեղարե, ախ ինչո՞ւ ես

գունատված.

Ու գունատված իր ծաղիկը քաջին այսպես մրմնջաց.
— Զարթնել էի, երբ որ հանկարծ ձորից եկան

աղմուկով՝

Այս աղբյուրից ջուր խմելու՝ քառասուն ցուլ և մի կով.
Բայց ջրի մոտ խառնվեցին ու բուղագոռ ու վայրի
կոխվ բացին, կովի համար, աղեղներով պողերի.
Գլուխ գլխի՝ եղջյուրներով՝ իրար ուսեր ոլորին,—
Շատի եղջյուրը փշովեց, բայց մեկն հաղթեց բոլորին,
Քեզ հիշեցի Սիամանթո, . . .

Բայց սև բաշովն ահագին

Շատ էր նման քո սպանած սև ձիավոր այն բեկին,—
Բայց նա, ախ, նա զարկեց, հաղթեց այն ցուլերին
անվեհեր,

Ելեց կովը ու աղբյուրից ելան, կորան դարն է վեր . . .
Ու չիմացա էլ ինչ եղավ, սիրտս չարն է գուշակում՝
Ախ էն բեկն էր ժպտում աչքիս՝ էն սև ցուլի սև
աչքում».

Լոեց գունատ Խաջեղարեն, Սիամանթոն մոայլեց,
Լարեց աղեղն իր հոնքերի և աչքի նետը փայլեց,
— Միթե իմ սերն հարամ է ինձ ու չի ժպտում ինձ
խուղան,

Այսպես ասավ չարագուշակ՝ Սիամանթոն ինքն իրան,
Ու ցած թուավ, խոռվի պես, որոնելով սև ցուլին,—
Ճակատագրի ձորերն իջավ, սարին թողած մարալին . . .
Ու մեկն ասես փախավ ժայռից . . . այնինչ՝ հովին
քարայրի՝

Դունչը կովին որոճում էր ցուլ մի անգեղ ու վայրի.
— Սրա մե՞ջ է մտել ոդին իմ սպանած այն բեկի . . .
Ու իելահեղ Սիամանթոն բռնեց բազուկն իր տեղի

Ու շանթի պես թոավ, զարկեց, խոցված ընկավ ցուլն
անհույս՝

Ու հանց լեզուն իր անեծքի՝ արյան բոցը թոավ
դուրս . . .

Ու կտրիմը դաշույնն հանեց ու ժպտալով մոտ դնաց,
Որ այն ցուլի սիրտը հանի, յարին տանի, բայց
հանկարծ . . .

Այս, ցուլն հանկարծ մի եղջյուրով այնպես խփեց
թափով թունդ,

Որ քարափից Սիամանթոն ընկավ մի սև ձոր
անդունդ, —

Ընկավ մի չոր ու ծեր ծառի, կուրծքը մտավ ոստը ցից՝
Սև թրի պես կուրծքը ճեղքեց ու դուրս ելավ
թիկունքից . . .

Հանկարծ՝ ինչպես ամպի մի թև, որ սահում է սարն
ի վեր.

Հայտնվեց ու նորից կորավ աղեղնավոր մի սովեր . . .

5

Բառաչում էր մեռնող ցուլը, բառաչում էր, հառաչում,
իսկ անհանդիստ իշաջեղարեն սարից յարին էր կանչում.
— Լո՛, լո՛, ո՞ւր ես, Սիամանթո, ո՞ւր մոռացար քո
յարին.

Ու հովն հեծեց «Հանդավ յո՛ լո՛ն, դու մնացիր պաղ
սարին.

Ու սիրտը դող՝ իշաջեղարեն արագ իջավ դարն ի վար,
Տեսավ որոր՝ տեղը կրծքին, բայց ա՛խ, որսկանը
չկա՞ր . . .

Ու ահն իսկույն սիրտը ընկավ, ծոեց ճամբեն աղեկեղ,
Դեմը բացվեց անդունդը սև՝ սև ցուլի սև աչքի պես.

Ու ցած նայեց գլխին տալով, դոռոցն ընկավ սար
ու ձոր.

— Սիամանթո՛, քեզ ի՞նչ եղավ, ո՞ւր ես ընկել
վիրավոր.

Սիամանթո՛ վե՛ր ել ասլան, քեզ ո՞վ զարկեց, ո՞վ
դցեց,

— Բախտ, բախտ, Խաջեղարե, ձորից մի ձայն
հառաչեց.

— Սիամանթո՛, ո՞ւր է որսդ, լուռ է լեզուդ
քաղցրախոս,

— Խաջեղարե՛, լաց մի լինի, որսկան էի՛ դարձա որս...

— Սիամանթո՛, ցավի ժեռը ինչպե՞ս պահեմ իմ
կրծքին,

Ու քար վշտից ճերմակեցին մեկից մազերն իր գլխին...

— Ո՞վ է լսել՝ զարկված որսը ետ՝ որսկանին սպանե,
Ո՞վ է լսել՝ վայրի ցուլը՝ սիրող սրտեր բաժանե,
Ու գոռում էր, գլխին տալիս, ձորի շուրջը ման գալիս,
Ասես մեռած որդու վրա մի մայր լիներ ողբալիս:

— Խաջեղարե, անձայն ողբա, ձայնդ նետ է սրտիս մեջ,
Բայց Խաջեի արցունքն ասես ծովից կուգար՝ չուներ
վերջ.

— Խո՛րն է վերքդ, խո՛ր կտքաս՝ ինչպե՞ս կանցնեն
աչքերն իմ,

Սիամանթո՛, մի հառաչե, Սիամանթո՛, կմեռնիմ. . .

Սիամանթո՛, վեր ել, իմ սեր, տես՝ մազերս են
ճերմակել,

Կուղե՛ս մազերս վար կախեմ, Սիամանթո՛, բռնիր ե՛լ,—
Եվ հուսքերից մեկը կտրեց իրար կապեց՝ կախեց վար՝
Բայց չհասավ ու լալիս էր ու գոռում էր խելագար...

Ու դեռ ձորից նվազ մի ձայն՝ հեծեծում էր՝ մի՛ մնա,
— Խաջեղա՛րե, արես քեզ, Խաջեղա՛րե, տուն գնա...

— Սիամանթո՛ գիրկդ կուգամ, էլ ինձ համար տուն չկա,
Սինամ հավքի թևերս ընկան, էլ ինձ համար բուն
չկա...

Ու սե ժայռի կոպերի տակ, որ կախվեցին ահավոր,
Լալիս էին աղբյուրները աչքերի պես նրա խոր.

— Ով է տեսել գարուն օրով կանաչ սարին ձյուն դնի,

Սիամա՞նթո, գիրկդ կուղամ, առանց յարի մի՛
Քնի...»:
Ու մուժ կիջներ սարե ի սար, կիջներ նրանց վշտի պես,
Լացով իջնող գումանը պաղ նրանց պատանքն էր
կարծես.
Դուման կիջներ Սիփանն ի վար ու ձյուն կիջներ ու
քամի,
Ու լցվում էր ձորը լացով այն որբացած այծյամի:

Քամիներ, իջեք,
Մաղերս պոկեք,
Ա՛խ, էլ մաղերս դուրդուրող չունիմ.
Ազոավներ իջեք,
Աչքերս հանեք,
Ա՛խ, էլ աչքերս համբուրող չունիմ...

Հանկարծ ինչպես պատյանից թուր՝ ժայռից մեկը
թռավ դուրս,
— Դու համբուրող ունիս, Խաջե, լաց մի լինի էլ
անհույս.

Լույսի կտոր իմ Խաջեզար՝ բաժին չէիր չորանի,
Նա իմ նետով բաժինն առավ ու քո մահը թող տանի...
Էն սև ցուլի եղջյուրի հետ՝ էն իմ նետն էր սրընթաց,
Ես էի որսն՝ որսկան զարկող, ժայռի ետև թաղնված,
Նա քեզ խլեց իմ եղբորից՝ Ազիզ բեկի մեծ որդուց,—
Բայց պատժվեց վոքրի ձեռով, ետ մի՛ կանչե կոկծուց,
Ե՛ս քեզ կառնեմ...».

Բայց խոլ ճշաց Խաջեզարեն իմ անրիծ,
Ետ չնայեց ու անեծքով պոկեց մաղերն իր գլխից,—
Ու կռացավ անդունդն ի վար՝ — քո Խաջեն եմ, նայիր,
տես,

Սիամանթո՛, ինձ էլ տեղ բաց, Սիամանթո՛, կուղամ
քեզ...

Հովե՛ր, ծաղկանց խունկը վառեք՝ մեզ թաղեցեք
առանց քար».



Կանչեց Խաջեն ու աչքը խոսի՝ նետվեց ձուը
գլխիվայր. —
Ժայռին փլվող ալիքի պես նազուկ կուրծքը փշրվեց,
— Այս, ինչ արիր՝ վերջին շնչով Սիամանթոն ձայն
տվեց.
Ու հեծեծաց Խաջեղարեն վերջին շնչով իր անձայն՝
— Սիամանթո՛, ու փշրված սիրտը սրտի՝ լուռ
հանգա՞ն, —
Վերջին անգամ հովն հեծեծաց՝ ասես շունչն էր տղայի՝
— Խաջեղա՛րե՛սս՛ ու հավիտյան լոեց անդունդն
ամայի . . .

ՎԵՐԱՇԵՐԳ

իսկ այն ձորում, ամեն տարի, ամեն դարնան
բացվելուն՝
Երկու ծաղիկ են երևում՝ երկու կակաչ տխրանուն,—
Ասում են թե չկար երկրում ո՞չ մի ծաղիկ՝ սիրու
ու, —

Այն օրվանից աշխարհ եկան կակաչները սրտասե,
Երբ որ Խաջեն, Սիամանթոն ընկան սիրո կես
ճամբին, —

Հնկան, հանգան, բայց չկորան, հող չդարձան. . . . ու
կրկին
Աշխարհ եկան՝ կակաչ դարձած, որ բացվում են դեռ
այսպես՝
իրենք՝ կարմիր, սրտերը՝ սև՝ իրենց էն սև բախտի
պես, —

Ու թեքվելով գլուխ գլուխ՝ հավերժ իրար են նայում,
Մահվան մեջ էլ հավերժ սիրով հավերժ իրար
փայփայում . . .

Սիամանթո—լեռնական հայորդու անուն
Խաջեղարե—Զարեհ բեկի աղջիկը
Այծենակաճ—իսկական հայերենը յափունջի
Բարո—հայրիկ

Սիփան

Առնոս | Վանի, Մոկսի Սասունի
Գրգուռ | շրջապարի իրար նայող
Ծովասար | բարձրագագաթները
Վարագա լեռ |

Մալուլ—սիլտը կոտրած

Խուզան—ճակատագիրը—առտված

Մարալ—եղնիկ

Ղուլ—ծառա (սարերում հոտաղ)

Թառլան—աղիզ, արծիվ

Ճան—վեղ

Խենջար—դաշույն

Լուլո—ձայնարկություն՝ քրդերեն:


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախերգանք	3
Երգ առաջին	շ	թ	թ	թ	թ	թ	թ	թ	թ	թ	թ	թ	5
Երգ երկրորդ	թ	թ	թ	թ	թ	թ	թ	թ	թ	թ	թ	թ	13
Երգ երրորդ	20
Վերջերգ	30

Պատ. խմբագիր՝ Գ. ԲՈՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վ.Ֆ. 02286. Պ. 31. Տիրաժ 5000. 2 տպ. մամ.
Ստորագրված է տպագրության 20/III 47 թ.

ՀԱՍՈՒ ՄԱ-ԻՆ ԿԵՐ ՊՈԼԻՊՐ. և հրատ. Վարչության № 1 տողարան
Երևան, Լենինի պ. № 65 1917 թ.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028984

ԳԻՆԸ 2 Ա.

